№ 232 Դեկտեմբերի 27 1880 Դեկտեմբերի 27 № 232

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամը
(Թացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն ժամում։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՈԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 բ., հինգ ամ. 5 բ., չորս ամ. 4 բ., երեք ամ. 3. բ. երկու ամ. 2 բ. և մի ամ. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազատ ուսում—Ներքին տեսութիւն։ Նամակ Շամախուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Դաւիթ բէկ։

ԱԶԱՏ ՈՒՍՈՒՄ

„Голосъ" լրագիրը իր վերջին համարների բանասիրականներից մինը կրկին նուիրում է համալսարանական հարցին։

Խօսելով այն խռովութիւնների մասին, որոնք վերջին տասն, տասն և հինգ տարի պատահում էին ռուսաց ուսանողութեան մէջ, մայրաքաղաքի թերթը վերաբերում է այդ խռովութիւնները համալսարանական այն խիստ սիստեմային, որ մոցրած էր ժողովրդական լուսաւորութեան նախկին մինիստր, կոմս Տոլստոյ։

Ուսանողները ենթարկված էին խիստ տեսչութեանը, զրկված էին իրանց ներքին պէտքերի մասին հոգալու և խորհրդակցելու իրաւունքից, պրոֆէսորների խումբը դուրկ էր համալսարանական ինքնավարութիւնից, շատ անգամ ընդունվում էին պրոֆէսորների թիւում այնպիսի դասատուներ, որոնց հակառակ էր պրոֆէսորների խումբը, բայց անզօր էր մերժել նրանց ընդունելութիւնը իրանց շրջանի մէջ։ Ֆակուլտէտի բոլոր առարկաները պարտադիր էին ուսանողների համար և երիտասարդները չէին կարող ընտրել իրանց ընդունակութեան և հասկացողութեան համեմատ ցանկացած առարկան և լսել միայն այն պրոֆէսորների դասասուութիւնը, որ իրանք էին ցանկանում։

„Голосъ" լրագիրը խորհուրդ է տալիս մեր համալսարաններին օրինակ առնել գերմանական համալսարանների կազմակերպութիւնից, համարելով այդ կազմակերպութիւնը աւելի կատարեալ, քան թէ եւրոպական միւս երկիրների համալսարանների կազմակերպութիւնը։

Ուսումը պէտք է լինի ազատ, ասում է ռուս թերթը։ Այն ժամանակ միայն ուսանողը կարող է իր մէջ անկախ հասկացողութիւններ մշակել, երբ համալսարանական վարդապետութիւնը կատարելապէս ազատ կը լինի, երբ պրոֆէսորն էլ իրաւունք կունենայ կատարեալ ազատ կերպով յայտնել իր համոզմունքները իր ամբիոնի բարձրութիւնից։ Ուսման ազատութեան հետ կապված է և ուսանողի իրաւունքը ընտրել այն առարկան, որ ինքն է ցանկանում, լսել այն պրոֆէսորին, որ ինքն է ցանկանում։ Ուսման և դասասուութեան փոխադարձ ազատութեան մէջն է, գլխաւորապէս, պրոֆէսորի և ուսանողի, միմեանց մէջ բարոյական անխզելի կապի գրաւականը, իսկ այդ բարոյական կապը բաներար կերպով ներգործում է երիտասարդութեան ամբողջ ապագայի

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Է.

Կանանոցի չարչիներից փոքր ինչ հեռու կազմված էին երկու վրաններ, նրանցից մէկը փառաւոր, ընդարձակ և գեղեցիկ էր, իսկ միւսը փոքր և հասարակ։ Առաջինի բարձր, նիրգանման սիւները զարդարած էին ոսկեզօծ և գոյնզգոյն նկարներով. ներսը ունէր մի քանի բաժանմունքներ, որ ձեռնում էին մի փոքրիկ պալատ իր բոլոր յարմարութիւններով։ Այնտեղ կար հիւրանոց, առանձնարան, քնարան, դիւանատուն, գանձարան և այլն։ Բաժանմունքների վայելչութեան համեմատ, վրանի աստառը պատած էր թիչմիրի թանգագին շալերով, Սպահանի ոսկեհուռ զարքաֆներով կամ Հնդկաստանի մեծաքանակ նուրբ գործուածներով։ Յատակը պատած էր ֆէրահանի նաշխուն գորգերով։ Թագաւորական փառքի վայելչութիւն ունեցող այդ վրանը դրսից ֆէրուզայի միակերպ գոյն ունէր և կարված էր ֆաչանի ամուր, անթափանցիկ և դաղաքից։ Նրա մէջտեղումը գլխին ծածանվում էր մի կարմիր դրօշակ, որի վրա նկարված էր մի աջ. դա Աբուֆայէբի որդի Ալիի զօրաւոր ձեռքն էր, որ առաջնորդում էր խանին նրա բոլոր յաղթութիւնների մէջ։ Վրանի առջև ցցած էին մի քանի երկաթեայ թառվիներ, որոնց վրա հանգարտ, խոհական կերպարանքով նստած էին ոսրդրական բաղէների ամենարնտիր տեսակները։

Գեղեցիկ թարլանը հպարտ վեհանձնութեամբ նայում էր իր չորջը, կարծես, կամենալով ցոյց տալ իր պարանոցի թանգագին մանեակը, որ զարդարած էր նրան ոսրդրոնի մանեակներով։ Բոլոր բազէները ունէին այսպիսի մանեակներ, և իւրաքանչիւրի արժանաւորութեան համեմատ, զարդարած էին գոյնզգոյն գոնարներով։ Նրանց ոտներին կապած էին ոսկեայ փոքրիկ բոժոժներ, որոնք ամեն մի շարժման ժամանակ ճռնկիչնկում էին, մելոդիական մեղմ ձայներ էին արձակում։ Մի ծիա, մի ազատնի օդի միջով անցնելու ժամանակ, նրանք իսկոյն բաց էին անում իրանց լայն թեքերը, և նեռի նման սլանում էին դէպի վեր, որ բռնեն, որ գիշատեն նրան։ Բայց մեծաքսեայ ոսոնակապը կրկին ցած էր քաշում նրանց և նստեցնում էր երկաթեայ թառվիների վրա։ Այս շատակեր թռչուններին շատ չէին կերակրում, և միշտ անյագ էին պահում, որ որսորդութեան ժամանակ աւելի սաստիկ ախորժակ ունենան բռնելու և գիշատելու։ Այսպէս պահում էր խանը և իր ծառաներին, այսպէս պահում էր և իր որսորդական շներին։ Այս վերջինները, թէ շները և թէ ծառաները, թիւչունները։ Այնտեղ կարելի էր տեսնել արագավազ բարակներ, թանգագին վզնոցներով, որոնց նուրբ կազմուածքը բաղկացած էր միայն ամուր ոսկորներից, զօրեղ մկանոներից և կարճ մազերով պատած կաշուց. կարծես, մի մի փոքրիկ քանակութիւն անգամ դրանց մարմնի մէջ կարող էր արգելել այդ թեթեւաշարժ անասունների սլանթացութիւնը։ Այնտեղ կարելի էր տեսնել փոքրիկ, կատու չափ, խորամանկ, չարաճճի թուլաներ, որոնք սատանայի նման ամեն ծակ կարող էին մտնել, որոնք հոտոտալով, կարող էին գտնել թաղված երէի հետքը։ Այնտեղ կարելի էր տեսնել լայնականջնայ եւրոպացի շներ, որոնք թէ ցեղով և թէ սոլորութեամբ, ասպանկանացել էին և աւելի զաղանային բնաւորութիւն էին ստացել։ Այնտեղ կային թանձր մազերով, ահագին, գայլանման գամիներ, որ մի հարուածքով կարող էին ջարդել ամենազօրեղ եղջերուի մէջքը, և իրանց ճանկերի մէջ կարող էին խեղդել ամենի վարազները, թէ իրանց հոգեկան և թէ բարոյական յատկութիւններով ամենեին չէին զանազանվում շներից։ Զանազանութիւնը միայն նրա մէջն էր, որ շները որսում էին իրանց նման անասուններ, իսկ ծառաները որսում էին իրանց նման մարդիկ։ Ամենի մէջ տիրում էր մի և նոյն անզթութիւնը, մի և նոյն գաղանային անյագութիւնը արիւն լափելու....

Բոլոր ծառաները հագած ունէին սև զաղաբից արխալուղ, իսկ նրա վրա տեղային կոչտ մահուդից կարված, մոյ գմոխրագոյն գէյմաչ. մէջքները պնդած էր կաշեայ գօտիով զարդարած արծաթեայ կապանքներով, որից քարշ էր ընկած լէկզու դաշոյնը։ Գլխներին դրած ունէին գառան մորթից կարած ահագին փափախներ, իսկ ոտներին հագած ունէին տրեխներ կաշեայ զանկապանոներով։ Կեղտոտութիւնը, անմաքրութիւնը տիրում էր նրանց վրա։ Ինչպէս վայրենի խաչիկները որ և իցէ իւղալի բան ուտելու ժամանակ իրանց իւղոտ ձեռքերը քսում են մերկ մարմնի վրա, որ օձին նման, այնպէս էլ այդ կիսավայրենիները իրանց իւղոտ ձեռքերը այնքան քսել էին արիւնուղների վրա, որ նրանց նիթը կոկվել, փայլում էր մուշամայի նման։

Խանի վրանի առջև տարածված էր ընդարձակ, կանաչազարդ հրապարակ, որի վրա ամրոխված էր, վրժվրժում էր բազմութիւնը։ Ամենքը անհամբերութեամբ սպասում էին խանի դուրս գալուն։ Ոմանք գործով էին եկած, ոմանք վէճ ունէին, նրանից դատավճիռ էին սպասում, ոմանք հեսաբքրիչ նայողներ էին, իսկ մի մասը նրա ծառաներն էին, որ սպասում էին, խանը նրանց մի ծառայութիւն յանձնէ, որից կարողանան շահվել։

—Ջաբբար, ասաց ծառաներից մէկը խանի բազէակարներից մէկին,—այսօր խանը շատ ուշացաւ, չէ դուրս գալիս։

—Իրա քէֆը չէ, երբ կուզէ, այն ժամանակ կը դուրս գայ, ով է նրան ստիպողը, պատասխանեց Ջաբբարը, և սկսեց փայփայել բազէի փետուրները, որ նստած էր նրա, մէնչ արմուկը կաչեայ ձեռնոցով պատած, բազուկի վրա։

Ծառան, նկատելով, որ իր հարցմունքը վատ տպաւորութիւն գործեց բազէակրի վրա, խօսքը փոխեց, հարցնելով.

—Ի՞նչ պիտի բաց անէք այդ բազէի աչքերը։ Եւ իրաւ, բազէի աչքերը կապած էին մի տեսակ կաչեայ անթափանցիկ ակնոցներով, որոնց նմանը կրում են մարդիկ քամու ժամանակ, աչքերը փոշուց պաշպանելու համար։ Բազէն զեռ անվարժ էր, այդ դրութեան մէջ նրան պահում են մի քանի ամիս լոյս և աշխարհ չէ տեսնում, մոռանում է իր վայրենի անցեալը, յետոյ աչքերը բաց են անում, փոքր առ փոքր ընտելացնում են նոր կեանքի, վարժեցնում են որսորդութեան։

Խանի ամբողջ դիւանը հրապարակի վրա սպասում էր նրան։ Մի տեղ գեանի խոտերի վրա նստած էր Ֆարրաշբաշին (ֆարրաշների կամ ժանդարմների գլխաւորը) աչքերը արիւնով և անգթութեամբ լցված մի մարդ։ Նրա չորջը խմբով կանգնած էին անզգոյշ ֆարրաշները, ձեռները իրանց դաշոյնի վրա դրած։ Գանգատաւորները, հաւաքված այնտեղ, ազատակում էին, խնդրում էին ֆարրաշբաշուն, որ իրանց դատը յայտնէ խանին։ Շատերը մտանում էին, չոքում էին նրա առջև, և ականջին փփփալով, կաչաք էին խոսանում։ Մի տեղ նստած էր խանի գլխաւոր մունշի-բաշին, այսինքն՝ միրզաների կամ գրագրների մեծաւորը։ Նա մի մաչաք, ցամաք մարդ էր, և յաճախ աթիոն ընդունելուց դէմքը գեղնել, գալկացել, մռեալի գոյն էր ստացել։ Նրա հատ գօտիի մէջ, առջևից խրած թղթերի փաթթոցները բովանդակում էին իրանց մէջ խանի ամբողջ արիւնը, որ նա իր գօտումն էր մեն ածում։ Այնտեղ էին տուրքերի, հարկերի հաշիւները. այնտեղ էին պաշտօնական թղթերի օրինակները. այնտեղ էին գատերի, վճռեանների

կեանքի վրա։ Թիւտ վերահսկողութիւնը ասանողի վրա զրկում է նրան բարոյապէս և մտաւորապէս ազատ զարգանալու միջոց, դրդում է նրան, շատ անգամ, ընկնել ծայրայեղ, վնասակար ուղղութեան մէջ և գրաշում է նրա ճակատին, նրա ապագայ ամբողջ կեանքի ընթացքում, անկախ, անշատական համոզմունքներից զուրկ մարդու դրոշմ։ Այն ինչ, երբ վերցրած կը լինի այդ խիստ, պոլիցիական վերահսկողութիւնը գիտութեան ազատ տաճարի սահերի վրայից, երբ տրված կը լինի համալսարանական ուսմանը և դաստիարակութեանը կատարեալ ազատութիւն,—այն ժամանակ ուսանողների մէջ կը զարթնի իրանց պէտքերի ինքնաճանաչութիւնը և դրա հետ միասին նրանցից իւրաքանչիւրի պատասխանատուութեան ճանաչելը ընդհանրութեան խիստ պահանջների առջև։

Ազատութեան հետևանքը միշտ լինում է իւրաքանչիւր անհատի պատասխանատուութեան և իր անձնական բարոյական պարտքի ճանաչելը։

Գ. Ա.

ՆԵՐՔՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽԻՑ

—

Դեկտեմբերի 15

Շամախու աւետարանական փոքրիկ միաբանութիւնը ի մոի ունէր դարձեալ մի ստորագրութիւն արձանագրութիւններ,—բոլորը թղթերի կտորտանքի վրա գրած, և խառն, անկարգ կերպով, խողովակի ձևով, միմեանց վրա փաթաթած։ Նոյն գօտի մէջ խրած էր նրա երկայն, նաչխուն թանաքամանը իր բաղմաթիւ եղէգնեայ գրիչներով։ Նոյն գօտիից քարշ էր ընկած բազմաթիւ կնիքների մի փունջ, հագիվ կոչված քարի վրա փորված, և արծաթի կոթերով բռնված։ Մունշի-բաշիի չուրջը հաւաքված էին իր ստորադրեալ միրզաները (գրագիրները)։ Նրանք էլ ունէին իրանց գօտիի մէջ թղթերի փաթաթներ և թանաքամաններ։ Այստեղ նոյնպէս բազմութիւնը զանազան խնդիրքներով զիմում էր մունշի-բաշիին՝ խանի գլխաւոր քարտուղարին, այս և այն թղթերն էր պահանջում։ Այստեղ նոյնպէս չատերը մօտենում էին, չոքում էին նրա առջև և ականջին բաներ էին փսփսում...

—Այս մարդու թուղթը պատրաստ չէ, գառնում էր նա գրագրներից մէկին։

—Պատրաստ է։

—Ինչու չէք տալիս։

—Դեռ բ ո ւ ս ա ն ա ն մը չեմ ստացել։

Բուսանումը այն ընծան էր, որ պիտի տար թղթի ստացողը գրագրին։ Յետոյ սկսվում էր երկար սակարկութիւն այդ ընծայի քանակութեան մասին։ Կաշառակերութիւնը կատարվում էր հրապարակաւ, որովհետև դա ընդունված մի սովորութիւն էր։

Բազմութեան մէջ մի դղրդոց ընկաւ և դէպի ամէն կողմ տարածվեցաւ խուլ չշունչ։ «Խանը գալիս է»։ Բոլորը ոտքի վրա կանգնեցան։

Կանանոցի կողմից յայտնվեցաւ խանը։ Նրա առջևից ընկած էին մի խումբ չաթրներ, իսկ ետևից գալիս էին մի խումբ ֆէրրաշներ։ Ինքը միայնակ, մէջ տեղում, վառվում էր ոսկու, արծաթի և գոհարների մէջ։

Մինչև դիւանխանէն հասնելը բաւական տարածութիւն կար։ Մի քանի տեղ կանգնեցրին նրան։

—Խան, քո ոտներին մատաղ լինենք,—խընդիր ունենք... Ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք ոչ ճանապարհի եզրում չոքած, անդադար համբուրում էին գետինը։

Դրանք գիւղացիներ էին, որ կռիւ էին ունեցել ուրիշ գիւղացիների հետ, մի քանիսը վիրաւորված էին, և վէրքերի արիւնը տեսնվում էր նրանց հագուստի և երեսների վրա։

—Ֆարաշբաշի, հրամայեց խանը իր ժանդարմների գլխաւորին,—մարդիկ կուզարկես, բռնել կը տաս այն չարագործներին, և քանի հոգի որ լինեն, իւրաքանչիւրից քսան թուման ջարիմա (տուգանք) առնել կը տաս, լաւ պատժելուց յետոյ։

Գանգատաւորները գետինը համբուրելով, սկսեցին գոչութիւն յայտնել և օրհնել խանի կեանքը, խանը անցաւ։

—Ձեր ոտներին մատաղ լինեմ, ասաց ֆէրրաշ-բաշին հագիվ լսելի ձայնով,—միւս գիւղացիների մէջ նոյնպէս վիրաւորներ կան և երկու հոգի սպանված են...

—Այդ մի և նոյն է, պատասխանեց խանը,—որովհետև դրանք առաջ գանգատվեցան, պէտք է դրանց դատը վճռել։ յետոյ կը լսենք, թէ միւսները ինչ են ասում...

Պարսկական դատաստանի կէսից շատ ճիշտ էր խանի վճիռը։ Երկու գիւղի մարդիկ միմեանց հետ կռուել էին։ մի կողմը չատպեց, գանգատվեցաւ և բաւականութիւն ստացաւ։ Երբ կը յայտնվէր միւս կողմը, նրան էլ «կը լսէին», այն ժամանակ առաջինների պատիժը գուցէ աւելի սաստիկ կը լիներ։ և այսպիսով երկու կողմն էլ «ջարիմայ» վճռած կը լինէին, և այդ աւելի օգտաւէտ էր խանի գանձարանին։

—Խան, քո ոտներին մատաղ, խնդիր ունենք... Ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք նոյնպէս ճանապարհի եզրի վրա չոքած համբուրում էին գետինը։

—Ինչ է ասելիս։

—Ֆարաշբաշի, հրամայեց խանը իր ժանդարմների գլխաւորին,—մարդիկ կուզարկես, բռնել կը տաս այն չարագործներին, և քանի հոգի որ լինեն, իւրաքանչիւրից քսան թուման ջարիմայ (տուգանք) առնել կը տաս, լաւ պատժելուց յետոյ։

Գանգատաւորները գետինը համբուրելով, սկսեցին գոչութիւն յայտնել և օրհնել խանի կեանքը, խանը անցաւ։

—Ձեր ոտներին մատաղ լինեմ, ասաց ֆէրրաշ-բաշին հագիվ լսելի ձայնով,—միւս գիւղացիների մէջ նոյնպէս վիրաւորներ կան և երկու հոգի սպանված են...

—Այդ մի և նոյն է, պատասխանեց խանը,—որովհետև դրանք առաջ գանգատվեցան, պէտք է դրանց դատը վճռել։ յետոյ կը լսենք, թէ միւսները ինչ են ասում...

Պարսկական դատաստանի կէսից շատ ճիշտ էր խանի վճիռը։ Երկու գիւղի մարդիկ միմեանց հետ կռուել էին։ մի կողմը չատպեց, գանգատվեցաւ և բաւականութիւն ստացաւ։ Երբ կը յայտնվէր միւս կողմը, նրան էլ «կը լսէին», այն ժամանակ առաջինների պատիժը գուցէ աւելի սաստիկ կը լիներ։ և այսպիսով երկու կողմն էլ «ջարիմայ» վճռած կը լինէին, և այդ աւելի օգտաւէտ էր խանի գանձարանին։

—Խան, քո ոտներին մատաղ, խնդիր ունենք... Ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք նոյնպէս ճանապարհի եզրի վրա չոքած համբուրում էին գետինը։

Դրանք նոյնպէս գիւղացիներ էին, որոնց ոչխարները գողացել էին. բայց գողը յայտնի չէր. ոչխարների տէրերը «վասկած» էին յայտնում գող Քէրիմի վրա, ասում էին նրա գործն է, խանը հրամայեց Քէրիմին կալանաւորել, ոչխարները առնել, իրանց տէրերին յանձնել, և յիսուն թուման էլ «ջարիմայ» առնել Քէրիմից յօգուտ գանձարանի։ Այդեօք Քէրիմը յանցաւոր էր այդ գողութեան մէջ, թէ ոչ,—քննութիւն չեղաւ. քննութիւնը միշտ մնում էր վճռից յետոյ։ Այսինքն, երբ Քէրիմից ոչխարները կառնէին գիւղացիներին կը յանձնէին, և յիսուն թուման էլ «ջարիմայ» կառնէին յօգուտ գանձարանի,—այնուհետև երբ կը յայտնվէր, որ Քէրիմը մեղաւոր չէ, այն ժամանակ կրկին ոչխարները գիւղացիներից կառնէին և կը տային Քէրիմին, և յիսուն թուման էլ նրանցից «ջարիմայ» կառնէին, որովհետև սուտ ասեցին։ Այսպիսով երկու կողմից էլ գանձարանը կը շահվէր, բացի դրանից, ոչխարները անդադար մէկից առնելով և մէսմին տալով, ամեն անգամ «դահնէք» (տաճառորդ) կը վեր առնէին նոյնպէս յօգուտ գանձարանի։

Այսպէս, խանը մինչև իր դիւանխանէն կամ դատարանը հասնելը, ճանապարհին, ոտքի վրա, մի քանի գանգատներ լսեց, մի քանի վճիռներ տուեց, բոլորը մի խօսքով, բոլորին բուսական ուշադրութիւն դարձնելէն յետոյ։ Դրսում, բաց օդի մէջ, աւելի հեշտ էր դատախազներին իրանց բողոքները նրա ականջին հասցնել. բայց երբ նա մտնում էր իր դիւանխանէն, այն ժամանակ բոլորովին անմատչելի էր դառնում։ Գանգատաւորը պէտք էր ֆարաշբաշուն զիմէր, մունշի-բաշուն զիմէր, և ով է իմանում, հարիւրաւոր չունչագրի պէտք է զիմէր, մինչև նրան թոյլ կը տային մերձենալ խանին և իր գանգատը յայտնել։ Բայց մինչև այդ թոյլատրութիւնը ստանալը, նա սոսկալի էր ամենին «փիշքէշներ» տալ...

Խանը արդէն մօտեցել էր դիւանխանէին։ Ամբոխը ամեն կողմից յետ էր քաշվում և մինչև գետին գլուխ էր տալիս։ Ֆէրրաշները իրանց ձեռքի վարդակներով գանակոծում էին հանդիպողին, ով որ փոքր ինչ ուշ էր շարժվում և ճանապարհ չէր բաց անում։ «Բրօ... բրօ... (հեռացիր, հեռացիր) գոչում էին չաթրները երիվարը և սարապը, տենդային ցնցումների նման, անցնում էին ամբողջ ամբոխի մէջ։ Մի մեռելային լռութիւն տիրել էր այդ ահագին բազմութեան վրա, միայն լսելի էին լինում ֆէրրաշների ու չաթրների զզուշացուցիչ ձայները։ Ցանկացած հեռուից մի աղաղակ բարձրացաւ և ամբոխի ուշադրութիւնը դարձաւ դէպի այն կողմը։

—Այրվեցան... այրվեցան... հայերը այրվեցան... լսելի եղան խուլ ձայներ։

Կարծես, մի ահագին հրդեհ բռնավառվում էր խանի դիւանխանէից փոքր ինչ հեռու։ Թանձր ծուխը, խառն հրդեղէն ալիքների հետ, բարձրանում էին դէպի երկինքը։

—Այդ ինչ է այրվում, հարցրեց խանը, կանգնելով դիւանխանէի առջև։

—Հայեր են... պատասխանեց ֆարաշբաշին, այնպիսի մի սովորական եղանակով, կարծես թէ, այրվող նիւթը փայտ, խոտ կամ յարդ լինէր։

Ֆէրրաշները հրամայեցին ամբոխին յետ քաշվել, որ խանը տեսնէ այդ տարօրինակ տեսարանը։

Բոցերի և թանձր ծխի մէջից երևում էին մի քանի մարդիկ։ մայրը գրկել էր իր երեխան, նրանցի հայրը ընկած էր որդու բազուկների վրա։ մի քանիսը, անչարժ կանգնած, ձեռքերը դէպի երկինք բարձրացրած, գոչում էին «գթութիւն... գթութիւն»... մի քանիսը ընկած էին գետնի վրա, ձայն չէին հանում... Տեսարանը սոսկալի էր։ Այրվում էին կենդանի մարդիկ։ Այրվում էին ամբողջ մարմնով, իւրաքանչիւրի մէջ թաթախած պատրաստների նման։ Ոչ ոք չէր մօտենում այդ տարօրինակ դէպքը չիրականացնելու համար։ Նա պիտի էր, նա կարող էր ուղղափառ մահմեդականին պղծել։ Բոցերը փոքր առ փոքր լափում էին նրանց և կանգնածները գլորվում էին ցած։ Մի մարմին ընկնում էր ուրիշ մարմնի վրա և ձևացնում էր գնդակների մի կոյտ—մի մարդկային խարոյկ, որ